

ԴԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՆ

Իմ հերթական այցելությանը ես Սեղարին գտարա իր լուսանկարը՝ մոր հետ Վարդանի կամքի մով կանգնած: Լուսանկարը, Կարսի մասին գրած հոդվածի հետ գտագրված էր թերթում: Ուրախացավ, կանչեց մորը՝ «Նայիր, դես,- ասաց,- մեր մասին հոդված է գտել իմ եղբայր՝ մեր լուսանկարն է դրել»: «Կվարդա՞ք,- հարցրեց մայրը՝ նայելով հայերեն գրատերին»: Սեղարն ինձ համար թարգմանեց մոր հարցը, բայց անմիջապես է շփապեց ինձ ազատել հոդվածը կարդալու հոգսից. «Ես Կարսում հայ ծանոթ ունեմ, հետո կխնդրեմ թարգմանել»: Մայրը փորձեց հյուրափրություն կազմակերպել: Սեղարը, որ գիտեր իմ ունեցած ժամանակի սղությունը, ինչ-որ բան պայմանավորվեց մոր հետ, և վերջինս, առանց հրաժեշտ գրալու, արագ հեռացավ: «Նա հիմա կզա,- ասաց Սեղարը՝ արդարացնելով առանց հրաժեշտի մոր հեռանալը,- մայրս մի փոքր հուշանվեր է ուզում հանձնել քեզ»:

Մայրը վերադարձավ՝ մեծադիր, պավկերազարդ օրացույցը ձեռքին: Նա սկսեց ամիս-ամիս թերթել օրացույցի էջերը՝ շարունակ խոսելով, և Սեղարն իր կոփրապվող ռուսերենով դժվարությամբ էր հասցնում թարգմանել: Դա Կարսին նվիրված օրացույց էր, և, ճիշճն ասած, մոր ասածները թարգմանելու կարիք էլ չկար. այդ օրացույցում բոլոր լուսանկարներն ինձ ծանոթ էին, ինչպես Կարսում մեկ անգամ եղած, կամ էլ «Երկիր Նախրին» կարդացած ամեն մեկին են ծանոթ Վարդանի կամուրջը, բերդը, քաղաքապետարանի շենքը, որ նախկինում մեծահարուսակ հայի երկիրկանի շքեղ գունն է եղել, Առաքելոց եկեղեցին և էլի պագմամշակութային շափ հուշարձաններ, որոնցով հիմա հիանում են կարսեցիները: Դիանում են ու, անշուշտ, երբևէ չեն շեշտում այդ հուշարձանների հետ կապված հայկական որևէ բան:



ՉԱՐԵՆՑՅԱՆ ՄԱՍՈՒՄՔՆԵՐ

...Սեզարի խանութում, որը գյոնվում է ճիշդ Վարդանի կամրջի կողքին, լիցքավորեցի փեսախցիկի մարդկոցը և, եթե շնորհակալ հայացքով ուզում էի հրաժեշտ բալ, կանխեց.

– Ես կգամ քեզ հետ. մարդիկ են հավաքվելու քեզ մոտ, կարող է նաև խանգարեն:

Սեզարը «Կարսի օրենքները» լավ գիտեր՝ թեպես քաղաքապետարանը հայկական թաղամասեր այցելող հայերին ուղեկից էր բալիս, բայց առանձին ինքնակոչ անձինք միշտ «պոչ էին դաշնուում»: Հաս Սեզարի, դա նրանից է, որ փեղաբնակները մրածում են, թե հայերն այսպես նախնիների պահած ոսկի են որոնում:

Կամովին իմ ուղեկիցը դարձած Սեզարի հետ մենք այգու միջով անցանք երկաթե կամուրջը, որի դիմաց Զարենցի գունն էր, ավելի շուրջ՝ գուն հիշեցնող պատերն ու դուռը: Սեզարն անթաքույց ծանձրույթով նայում ու զարմանում էր, թե ինչպես կարելի է ժամերով կանգնել այդ հնարույր (ինքը ասում է՝ լրված) բան բակում, մարմերով երկար, շաբ երկար շոշափել փայտե լայն, երկինքի դուռը, բան պատերը: Իսկ ես մի թանկ, շաբ թանկ բան կորցրածի մոլոր հայացքով պարզում եմ անծածկ պատերի շուրջը, նկարահանում ու լուսանկարում, քթիս բակ էլ զարենցյան գողեր մփմփում. «...ամեն մեղքի համար սիրս իհմա ունի ներում. //Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ աջս է հեռուն...»:

Սեզարը, հորանջելը ձեռքի ափով փակելով, խուլ ձայնով հարցնում է.

Իսկ ես նրա կորրապվող ոռուսերենը հարսպացնում եմ Տերյանի գողերով.

«Երանի նրան, ով հայրենական գուն ունի հիմա...

Ով խաղաղ սրբով մրնում է շիրիմ,

Հազար, բյուր անզամ երանի նրան...»:

– Իմ կորուսպը, Սեզար, քո կորուսպը չէ: Դիմա ես եմ դաշնում քեզ ուղեկից: Արի միասին քայլենք իմ վաղեմի Կարսով, քո այսօրվա Կարսով: Ձեր դպրոցում քեզ չեն պարմել, որ Պուշկինը եղել է Կարսում և Արսեն անունով հայի ուղեկցությամբ շրջել է ու հիացական գողեր գրել այս քաղաքի մասին: Քեզ չեն պարմել Խորիմյան Շայրիկի՝ Կարս կարարած այցի մասին: Իսկ Շայրիկը՝ Ամենայն Շայոց կաթողիկոսը, Կարս քաղաք եկել է, ինչպես հայրն է այցելում իր որդու գուն: Դիմա լսիր, ես քեզ պարմեմ Վեհափառի այցի մասին: Դա եղել է 1901 թվականի ապրիլ ամսին: «Կարս քաղաքն ամբողջովին դուրս էր եկել ընդունելու Շայոց Շայրապետին... փողոցները, պարշաբամբները, բանիքները լին էին երկու սերի բոլոր ազգերի անհապներով, իսկ եկեղեցու առաջ ասեղ ծգելու դեռ չկար. կանգնեցրած էր շրեղ հաղթական կամար, որի բակ քաղաքի երեք դեպուրապները Վեհափառ Տիրոջը աղ ու հաց մաքուցեցին: Աշակերպ և աշակերպուիհներից կազմված երգեցիկ խումբը «հրաշափառ» երգելով, հոգևորական դասով և մեծ թափորով մրավ եկեղեցի: Ապրիլի 15-ին եկեղեցում Վեհափառ Շայրապետը Շայրիկեան լեզուով խօսեց եղբայրասիրության և ընկերասիրության մասին՝ հիշեցնելով Պեշիկթաշլյանի խոսքերը. «Ընդ ասպեկտոց ինչ կա սիրուն, քան զանցկալից եղբայր անուն»: ... Տորդոր կարդաց բոլոր հայերին իբրև եղբայրներ սիրել իրար. «Ես այն մոլեռանդ կրոնավորներից չեմ, որոնք կրոնավոր անհամբերողությամբ ապում են ուրիշ կրոն դավանողներին. ինձ համար բավական է, եթե ճշմարիթ քրիստոնյա է—սիրող ընկերին, եղբորը, բարեկամին: Մենք բոլորս. իբրև Շայրի զավակներ՝ եղբայրներ ենք, և մեր շահերը ընդհանուր են: Այցելեց թուրքաց և պարսից մզկիթներ: Երբ մինարեի գլխից երգիչը փեսավ վեհափառի թափորը, բարձր ձայնով սկսեց իր աղոթքը՝ որպես բարի գալուսպ: Նոյնը՝ պարսից մզկիթի մոտ: Ապա՝ հունաց եկեղեցում: Բոլոր պեղերում օրինեց ամենքին: Կարս երեք օր շարունակ գրոնական կերպարանք ուներ...»:

Քեզ, Սեզար, չեն պարմել նաև, որ Ադրիանոպոլիսի պայմանագրով 1830-ին հինգ ու կես հազար հայ Կարսից զաղթել է Շիրակ ու Փամբակ: Ու մի նեղվիր, որ ես հիմա այդ ամենը վերիիշում եմ՝ կեսը անձայն, կեսը մրմունջով, պարզապես այդ վերիուշը թելադրվում է իմ այսպես լինելով՝ կողքիս լինես, թե չլինես:

Արի հիմա ես ու դու մի պահ կանգնենք Վարդանի կամրջի վրա: Այն քեզ համար պարզապես կամուրջ է, իսկ ինձ համար՝ «Վարդանի՝ կամուրջը»: Այսպեսից լավ է երևում

Առաքելոց եկեղեցին. դու նայում ես զմբեթին ամրացված երկաթե կիսալուսնին, ես՝ զմբեթը գովուորող 12 առաքյալների խորաքանդակներին: Քեզ սովորեցրել են, թե հայերի պները անիծված փներ են, դրա համար էլ դրանք կամ քանդում են կամ էլ անբնակ են թողնում, եթե ամուր ու լավ շենք է: Խսկ ես, Սեզար, դրանց նայելիս պարկերացնում եմ, թե Գյումրիի Աբովյան փողոցով եմ անցնում: Սա, իհարկե, քեզ պարմելու թեմա չէ:

Կիսահորանց Սեզարին առաջարկում եմ գնալ մովակա Բեշթաշիկար գյուղը:

- Այդ խուլ գյուղու՞ն ինչ ես կորցրել,- հարցնում է նա:
- Լսել եմ, թե Զարենցն այդ գյուղի դպրոցում ուսուցչություն է արել:
- Քանի՞ պարի առաջ:

– Կոպիտ հաշվարկներով երևի մի 90 տարի առաջ:

– Չո կարծիքով 90 տարի առաջվա շենքն այդ խուլ գյուղում մնացած կլինի՞:

Սեզարը ճիշդի էր՝ Բեշթաշիկար գյուղում դպրոցի հին շենքն իրապես չկար, իսկ 60 աշակերդով նոր դպրոցը չարենցյան հետքեր չուներ: Զետունայն հետացանք գյուղից՝ ամեն մեկս իր մոքերով, Սեզարը՝ «Ես ասում էի, չէ», որ անվետի եկանք այս գյուղ», ես՝ «Մի հետք էլ կորավ Զարենցից»:

Մենք վերադարձանք Կարս, և Սեզարն արդեն ինքն էր առաջարկում շարունակել մեր պրոյցիքը: Ունց որ թե Սեզարին մի փեսակ «ինձնով էի արել», ու չարենցովվել էր նրա պրամադրությունը: Վնցել էր նրա ալարկովությունը, և կարծես վագ էր զգում, որ իր ապրած քաղաքի մասին ես ավելի շատ մանրամասներ գիտեմ, քան ինքը:

Մեքենան բաց թողեցինք և Էրգորումի փողոցով քայլեցինք դեպի Վարդանի կամուրջ:

Խանութ չմրանք, և կամրջի բազրիքին կոթնած նայում էինք անցնող ջրերին:

– Այս կամրջի մասին ի՞նչ է գրել Զարենցը, արդեն իրապես հետաքրվեց Սեզարը՝ հայացքը հոսող ջրերին:

– Գրել է, որ սրա բակը վիհեր կան, որ «գելքում խեղդվածները զալիս հավաքվում են կամրջի բակ գրնվող ահուելի վիհերում...», և այդ վիհերում ապրում են ջրային գազաններ. պառավներ, մարդագլուխ գոմեշներ, ջրային հսկա մի օձ, որը կամրջի «գրերն» է:

Սեզարը հետ քաշվեց, կարծես գազանները հենց հիմա պիտի դուրս գային:

Վվելի գունեղ դարձնելու համար սարասինի այս պատմությունը, հարցրի.

– Դու այս կամրջի բակ երբես լողացե՞լ ես:

Խեղճ Սեզար, եթե անգամ լողացած լիներ, անցած-գնացածով անգամ պիտի սարսուռ զգար: Դիմա թե լեզենդի չվերածեի իմ այս պարմությունը, որ Զարենցի պարմածն է, թերևս Սեզարն իր խանութ զալու-գնալու սովոր ճամփեն փորիեր: Ես փորձեցի հանգապացնել նրան.

– Այս գունդ ջրահարսեր էլ կան,- ասացի,- որոնք գազաններին զապում են:

– Նա՞,- նեպեց Սեզարը:

Բայց Սեզարը գեղը գեղին վախեցել էր, ու ես ասացի, որ այս ամենը լեզենդ է, այս քաղաքի հնարքնակների հորինած լեզենդը:

Մենք կամրջի կորությունից արագ իշանք դեպի խանութ:

...Կարսի «հայկականության» մասին (Սեզարի խոսքերն են՝ «Դու ինձ Ղարսի հայկականության մասին դասեր ես բալիս») Սեզարն արդեն բավարար «զիտելիքներ էր ձեռք բերել», և մեր ջրայցը քաղաքում նրա համար բոլորովին նորովի էր բացում քաղաքը, որպես ինքն ապրում է, բայց երբես չի խորհել այդ քաղաքի պարմության մասին: Նրա համար քաղաք ասածը իր խանութն է, կենքրոնական փողոցը, որպետից ապրանք է բերում խանութի համար և իր գունը, որ քաղաքի ծայրամասում է:

– Գնանք եկեղեցի, Սեզար,- առաջարկեցի ես, երբ արդեն նրա եղբայրը եկել էր, և խանութին փիրություն անող կար: Վարդանի կամրջից եկեղեցի երկու քայլ էր, բայց այդ բարածքը մենք անցանք շատ երկար. Սեզարն ինքն էր արդեն իր ապրած քաղաքի մասին ինձ հարցեր բալիս:

Եկեղեցու գավիթում մի բողաք էր կանգնած, ով ամեն մովեցողի ժպիում էր, իր ծառայությունն առաջարկում: Ծառայություն ասածը եկեղեցու «պարմությունն» էր, որ նա պարբռասպ էր կրկնել ամեն անցորդի համար: Սովորական այցելուին այդ բողաք հիացմունք էր

պարագառում, որ այդշափ լավ գիտե եկեղեցու պարմությունը, բայց գոնե հայերիս համար առնվազն փարօրինակ էր այդ անզիր փեքսպը, որ սովորեցրել էին նրան ու կանգնեցրել այդպես: Նրա անզիր արած պարմությունը ոչ մի կապ չուներ իրականության հետ: Բայց այդ փղան պետք էր՝ հայկական արձանագրությունների փոխարեն այլ գորեր ունեցող որմնաքարեր դնելու ճանապարհով եկեղեցիների մի նոր պարմություն հորինելու և այդ երեխայի (նաև այդ երեխայի) միջոցով մաքուցելու համար:

Սեղարը լսում էր այդ երեխայի բլրլոցը, իսկ դրան զուգահեռ իմ ականջներում հսկակ ու ամուր հնչում էին Չարենցի փողերը. «...Ինչ որ է հոգին մարմնի նկարմամբ, ինչ որ է ուղեղը, աչքը կամ սիրպը՝ մարդու կազմվածքում-նույնն է Առաքելոց եկեղեցին նախրյան այդ քաղաքում: – Ինչ որ է Նորք Դամք փարիզցիների համար – նույնն է այդ քաղաքի բնակիչների աչքին – Առաքելոց եկեղեցին»:

Ես Սեղարի ուշադրությունը իրավիրեցի 12 առաքյալների քանդակների վրա, որոնք գործուրում են քարաշեն զմբեթի պարերը:

– Դրանցից մեկը փարբեր է մյուսներից: – Եկեղեցու շուրջը պարույր անելուց և մեկ առ մեկ ուշադիր զննելուց հետո, ասաց Սեղարը:

– Դա Շուղան է, Սեղար, քրիստոնյա աշխարհում նրան համարում են Քրիստոսին մատնող, դավաճան:

– Ըստ այս փղայի ներկայացրածի, - եկեղեցին հայերը չեն կառուցել:

– Դու փորձիր, Սեղար, նրա անզիր արած ասածները մի պահ ընդհագել և պարահական մի հարց պալ:

Սեղարը, որ չէր խորացել իմ ասածի էության մեջ և կարծում էր, թե նկափի ունեմ լրացուցիչ ինֆորմացիա սպանալը, մոփեցավ փղային ու հարցրեց՝ «հայկական ի՞նչ կա այս եկեղեցու հետ կապված»: Տղան դադար առավ, շիոթքվեց, փորձեց իր անզիր արած փեքսպի մեջ բյուզանդական բառը զուգահեռել հայկականի հետ, չսպացվեց և շվար հայացքով մի պահ նայելով Սեղարին, թուքը կուլ դպեց ու ... շարունակեց բլրլացնել անզիր արածը:


... Թե մի Սեղարի «աչքերը բացելով» ի՞նչ կիրխավի, չզիտեմ, բայց այդ փղայի գոյությունը եկեղեցու զավթում ինձ գոնե լրջորեն անհանգստացնում է:

«Եպողարձին երկուս էլ լուս էինք: Սեղարի լուրջունը զուցե թե «հայկականացված» գրամադրությունից էր, իսկ իմը՝ Առաքելոց եկեղեցու մով մշտապես «հերթապահող» այն փղայի ներկայությունից:

... Շնորհակալ եմ, Սեղար, որ քո խանութում լիցքավորեցի վեսախցիկս մարդկոցը: Շնորհակալ եմ սահմանները պահելու մասին քո փիլիսոփայության համար, որ ինձ հիշեցրեց Գարո բիծու շերամապահության պարմությունը: Շնորհակալ եմ քո խոսքումի համար, որ քեզ խանութ բերող կամրջին այսուհետ «Վարդանի կամուրջ» ես անվանելու և քո մայրիկին ու քո երեխաներին էլ պարմելու ես Չարենցի ու «Չարենցով խելառ» հայերի այս խմբի մասին:

Երանի քեզ, Սեղար, որ օրը մի հարյուր անգամ անցնում ես Վարդանի կամրջով ու ոչ մի կորոր հուզմունք չես ապրում: Բայց իմաս ուրախ եմ, որ ասում ես, թե ամեն անգամ կամրջով անցնելիս քեզ եմ հիշելու: Գիտեմ, Սեղար, քո հիշողությունների մեջ ես մնում եմ որպես մի փարօրինակ լրագրող, ով այդքան շաբ նկարում էր Վարդանի կամուրջը, Առաքելոց եկեղեցին, բերդը, բերդի սպորովին իրենց հնաբույր վներում ապրողներին՝ միշտ զարմանալով, թե ինչ շաբ երեխաներ կան հոլիկներ հիշեցնող այս փոքրիկ վներում:

... Այս աշխարհում կիրխավի՝ մի բան, չզիտեմ, բայց ես կարծում եմ, որ օրը մի հարյուր անգամ Վարդանի կամրջով անցնող-դարձող Սեղարը այսուհետ պիտի որ իիշի, թե ինքն անցնում է Վարդանի՝ կամրջով: Միսիթարվենք նաև սրանով:



Ծալունակելի